ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ Ն 145-Ա
«25» ՀՈՒԼԻՍԻ 2023Թ

ԱՍԱՏՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Ասատուր Մկրտչյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2023 թվականի հուլիսի 31-ից մինչև օգոստոսի 11-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գտնվող «Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ասատուր Մկրտչյանին տրամադրել 2022-2023 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Ասատուր Մկրտչյանի բացակայության ընթացքում նրա պարտականությունների կատարումը դնել նույն կազմակերպության ընտանեկան բժիշկ Արամ Հարությունյանի վրա:
3. Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 2023 թվականի օգոստոսի 14-ին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7/25/2023

X

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ք.Եղեգնաձոր

Подписано: SARGSYAN DAVIT 4105850407